ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/43, 23.03.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Շին Նախագիծ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20» բաց մրցույթ

Գնման առարկան՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ 2 որոշումը /Շին նախագիծ ՍՊԸ-ի մասով/:
2. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս և Ոսկեհատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ երկրորդ որոշումը:

3. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ, Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 4 արձանագրության երկրորդ կետի թիվ երկրորդ որոշումը /Շին նախագիծ ՍՊԸ-ի մասով/:

4. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ և Սարուխան համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 04 մարտ 2020 թվականի թիվ 2 արձանագրության 11-րդ կետի թիվ 11.1 որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն

օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Շին նախագիծ» ՍՊԸ
ՀՎՀՀ 04225682
Հասցե՝ Արարատի մարզ գ.Բուրաստան Գարեգին 2
Հեռ. +374 93 17 05 91 , 77 89 91 94
Էլ. փոստ՝ shinnaxagic@mail.ru

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ք.Երևան Կ. Ուլնեցի 31

Գնման ընթացակարգի ծածկագիրը և անվանումը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ.
2. ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս և Ոսկեհատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ.
3. «ՀՀ, Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ.
4. «ՀՀ, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ և Սարուխան համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ:

ԲՈՂՈՔ

- *Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝
ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ ՁԻՆՁ ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ, Tossab Consulting Engineers Company, ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ ընկերությունները:
Ընթացակարգը բաղկացած է եղել 4 չափաբաժիններից և ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ մասնակցել է բոլոր չափաբաժիններին :

Գնահատող հանձնաժողովի 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ 2 որոշմամբ մերժվել և գնահատվել է անբավարար ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի հայտը: Այնուհետև պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ ըստ որի թիվ 1,2,3, 4 չափաբաժիններով հրավերի պահանջներին անհամապատասխան մասնակից է որոշվել ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ –ն՝ աշխատանքային փորձ, աշխատակազմի որակավորում չափանիշով անբավարար գնահատվելու հիմքով:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝
ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս և Ոսկեհատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝
ՁԻՆՁ ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ, ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ ընկերությունները:
Ընթացակարգը բաղկացած է եղել 4 չափաբաժիններից և ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ մասնակցել է բոլոր չափաբաժիններին :

Գնահատող հանձնաժողովի 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ երկրորդ որոշմամբ մերժվել և գնահատվել է անբավարար ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի հայտը: Այնուհետև պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ ըստ որի թիվ 1, 2 չափաբաժիններով հրավերի պահանջներին անհամապատասխան մասնակից է որոշվել ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ –ն՝ աշխատանքային փորձ, աշխատակազմի որակավորում չափանիշով անբավարար գնահատվելու հիմքով:

3, «ՀՀ, Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ **Ձրտուք ՍՊԸ , ՁԻՆՁ ՍՊԸ , Կոմուննախագիծ Ինստիտուտ ՍՊԸ , ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ ,** Tossab Consulting Engineers Company, **ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ, ԽՈՅԱՆՔ ՍՊԸ - ները :**

Ընթացակարգը բաղկացած է եղել 4 չափաբաժիններից և ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ **մասնակցել է բոլոր չափաբաժիններին :**

Գնահատող հանձնաժողովի 10 մարտ 2020 թվականի թիվ 4 արձանագրության երկրորդ կետի թիվ 2 որոշմամբ մերժվել և գնահատվել է անբավարար ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի հայտը: Այնուհետև պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ ըստ որի թիվ 1, 2 չափաբաժիններով հրավերի պահանջներին անհամապատասխան մասնակից է որոշվել ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ –ն՝ աշխատանքային փորձ , աշխատակազմի որակավորում չափանիշով անբավարար գնահատվելու հիմքով:

4 , «ՀՀ, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ և Սարուխան համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ **ՁԻՆՁ ՍՊԸ , ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ - ները :**

Գնահատող հանձնաժողովի 04 մարտ 2020 թվականի թիվ 2 արձանագրության 11-րդ կետի թիվ 11.1 որոշմամբ մերժվել և գնահատվել է անբավարար ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի հայտը: Այնուհետև պատվիրատուն 20 մարտ 2020թվականին տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ ըստ որի հրավերի պահանջներին անհամապատասխան մասնակից է որոշվել ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ –ն՝ հայտը անբավարար գնահատվելու հիմքով:

- *Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) Գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններև ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով *Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար հայտարարված* ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 **ծածկագրերով բաց մրցույթի հրավերի 1 ին մասի 8.2 կետով՝ պատվիրատուն արդեն իսկ հրավերով սահմանել է թե որ դեպքում է մերժվում մասնակցի հայտը՝ մեջբերում հրավերի պահանջը՝ <<բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան նաև հրավերի 1- ին մասի 8.9 կետով պատվիրատուն սահմանել է մեջբերում հրավերի պահանջը՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը , նաև հղում Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշումից՝ Հայաստանի**

Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40 – րդ կետի 4-րդ ենթակետով հստակ սահմանում է հայտերի մերժման հիմքերը՝ դրանք են ՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը նաև **Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանվում է՝ մեջբերում որոշումից** Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է << պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսպիսով նշված ընթացակարգերի հրավերով՝ պատվիրատուի կողմից սահմանավել է որ հայտերի բացման նիստում մերժվում են այն հայտերը որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան իսկ մնացած դեպքերում մասնակցին տրվում է հնարավորություն հայտը շտկելու:

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով նորմատիվ իրավական ակտն մեկնաբանվում է՝ <<Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից>>:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ՝ Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Վերոգրյալի լույսի ներքո հետևում է, որ պատվիրատուի (տվյալ դեպքում հանդիսանում է պետական մարմին) գործողությունները բացառապես պետք է բխեն օրենքից և ենթադրություններ կամ անձնական կարծիք հայտնելու իրավասությամբ պատվիրատուն օժտված չէ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք որ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 , ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 **ծածկագրերով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատող հանձնաժողովը անհիմն է մերժել** Շին նախագծի ՍՊԸ –ի հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել՝ *Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար* ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ 2 որոշումը /Շին նախագիծ ՍՊԸ –ի մասով/:

2. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս և Ոսկեհատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 3 արձանագրության երկրորդ կետի թիվ երկրորդ որոշումը:

3. Դադարեցնել՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ, Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 10 մարտ 2020 թվականի թիվ 4 արձանագրության երկրորդ կետի թիվ երկրորդ որոշումը /Շին նախագիծ ՍՊԸ –ի մասով/:

4. Դադարեցնել՝ *Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար* ՀՀ, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ և Սարուխան համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ընդունած 04 մարտ 2020 թվականի թիվ 2 արձանագրության 11-րդ կետի թիվ 11. 1 որոշումը :

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
2. «Շին նախագիծ» ՍՊԸ տնօրեն –Փառանձեմ Սուքիասյանի նույնականացման քարտի պատճեն:
3. Նշված ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նիստի արձանագրությունները և պայմանագիր կնքելու՝ որոշումները:

Առդիր 43 թերթ:

Հարգանքով՝

«Շին նախագիծ» ՍՊԸ տնօրեն Դ.Սուքիասյան

23.մարտ 2020թ.